

ՎԱՅԱՌԱՏՈՒՆ ՀԵՐՅԱՅԻ



ԱՊՐԵԿ ՎԱՅԱՌՈՒՄ
Յանապոսաց զիւրաբան
Գաւառ

ՎԵՐՃԻՆ ԳԻՆ

Եթէ կ'ուզէք ամէն
սեռակ գոհարեղէններ
ունենալ՝ դիմեցէ՛ք
կ. Պոլիս, Սուխբազ
Նուկայ մեծ փողոց թիւ 13

Հերմայի վաճառատունը ունի եւրոպական
ճաշակով պատրաստուած գոհարեղէններ,
ամենքն ալ առաջնակարգ ըլլալու պայմանաւ:
Հերմայի վաճառատան գիներն անկեղծիկ են:
Հերմայի վաճառատունը ունի արծաթեղէն
առարկաներ:
Հերմայի վաճառատունը ունի ժամացույցներ
եւ արծաթեայ գաւազաններ (պատգով):

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հարիւրին բաժն կանխիկ, մնացեալին հա-
մար շարքով կան ճարտարին հինգ վճարում:
Կանխիկ գնովին համար 100ին 5 դրոշ:
Գործածուած գոհարեղէններ՝ եթէ վնասու-
ուած չեն՝ 100ին 10 դրոշով ետ կանուրին:



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ, իսկ չէ՛տն է լաւ մեքե-
նայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը
անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ
դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:
Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԵՐ

(ՀԱՅԹԱՅՐԻՉ ԿԱՅՍ. ՓԱՆԱՏԱՆ)
The Singer Manufacturing Cie.

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն
աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ
դիւրագործածելին ըլլալուն՝ լուսնադակ աշխարհի
մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գէշ:

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառա-
տանց մէջ:

ՍԻՆԿԵՐ
ՄԱՆՖԱԿԵՐԻՆԳ
ԿՈՐՊՈՐԱՇՆ

- | | | |
|---------|---|---|
| ԲԵՐԱ | { | 1. Մեծ փողոց, Պօլի Մառչէի դէմ, թ. 343 եւ 343 կրկին. |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | { | 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաբէօյ, Թրամպէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | { | 1. Սուրբան Համամ, թիւ 2. |
| | | 2. Սուրբան Պէյազիտ, Թրամուէի կայարանին դէմ, թ. 13 |
| ՍԿԻԻՏԱՐ | | Չարչը Պօյու, թ. 120. |

Դասերը եւ նորագոյնիւմն ձեռքի.
Կատարեալ երաշխաւորութիւն
Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց,
թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս պէյ Տիւղզուրի տունը:



ՏԱՐԵԴԱՐՁ ԾՆՆԴԵԱՆ

ՕԳՈՍՏԱՓԱՌ

ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ

ՄԵԾԱՆՈՒՆ ԻՆՔՆՍԱԿԱԼԻՆ ԹՈՒՐԿԻՈՅ

Օսմանեան ընդարձակածաւալ Կայսրութեան ամէն կողմը, ինչպէս նաև աշխարհի այն բոլոր մասերուն մէջ ուր որ Օսմանցիներ հաստատուած են, ցնծութեան արտայայտութիւններով և անհուն բերկրութեամբ կը տօնուի վաղը ՕԳՈՍՏԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ Ծննդեան բարեբաստիկ ճարեդարձը :

Ինչպէս Կայսերական Գահակալութեան՝ նոյնպէս Կայսերական Ծննդեան հանդիսաւոր բարեպատեհ առիթներուն մէջ երկիրը նորէն ու նորէն երախտադիտութեամբ կը յիշէ բոլոր այն բարիքները ու յառաջդիմութիւնները զորս կը պարտի մեծազօր Վեհապետին հայրական հոգածութեան և խորին իմաստութեան : Այն նշանաւոր արարքները, արդիւնք ն. Կ. Վեհափառութեան պետական դիտութեան և անդուլ անդադար աշխատութեան, որոնք Թուրքիան հասուցին իր արդի բարձր կացութեան և Մեծ Տէրութեանց շարքին մէջ նախանշելի դերք մը տուին անոր, մասնաւորապէս ի յուշ կ'ածուին այս բարեբաստիկ

Տարեգարհներուն առթիւ, որոնք մէյմէկ նշանաւոր հանգրուան են Օսմանեան Կայսրութեան փառաւոր տարեգրութեանց մէջ: Միլիոնաւոր հաւատարիմ հպատակներ այս օրերուն մէջ հպարտութեամբ ակնարկ մը կ'ուզէին դեպ ի ետեւ, ու երախտագիտութեամբ կը չափեն մեծութիւնն այն ճամբուն զոր Օսմանեան Տէրութիւնը կտրած անցած է շնորհիւ ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ, մեծազօր ու հանճարեղ Ինքնակալին:

Եւ արդարեւ, նաւաստորմը ու բանակը յարաճուն կերպով զօրացած, երկրին ելմտական ու տնտեսական վարկը զգալապէս բարձրացած, բարեգործական ու կրթական հաստատութիւնները բազմացած, արուեստները ծաղկած, երկրագործական աշխատութիւնը նոր զարկ և մղում ստացած, հանրօգուտ շինութիւնները շէնցած, և դեռ անթիւ անհամար երկրաշէն ձեռնարկութիւններ ու հոյակապ գործեր ի գլուխ ելած են ու կ'ըլլեն՝ ամէնքն ալ ընդ ուզակի հսկողութեամբ ՕԳՈՍՏԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՄՍԵՐ որ իր իմաստուն ղեկավարութեամբ և մեծագործութիւններով ամէնքն ականաւոր դէմքը կը հանդիսանայ իր մեծապանծ նախորդներուն փայլուն շարքին մէջ: Դիւանագիտական, վարչական, ելմտական և ուրիշ բազմատեսակ աշխատութեանց և հոգածութեանց մէջտեղ, ՕԳՈՍՏԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՄՍԵՐ իր բարձր ուշադրութեան առարկայ կը դարձունէ, միշտ և հանապաղ, բարեգործական հաստատութիւնները, կանգնելով հիւանդանոցներ, անկերանոցներ, ապաստարաններ, իր լիաւատ նպատակները հասցնելով ամէնուն ալ և իր վեհաշուք հովանին տարածելով ամէնուն վրայ:

Բնական է ուրեմն որ Ն. Կ. ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ միլիոնաւոր հպատակները նոյնչափ հաւատարիմ՝ որչափ երախտագէտ, ցնծագին բերկրութեամբ տօնեն Կայսերական Ծննդեան բարեբաւոտիկ Տարեգարհը, որով տօնական շքեղ երեւոյթ մը կը զգեսու Օսմանեան փառաւոր ոստանը ինչպէս նաեւ երկրին բոլոր մասերը՝ կեդրոն քաղաքներէն մինչև հեռաւոր անկիւններն ու առանները:

Լրագրութիւնը մասնաւորապէս երախտապարտ է Ն. Կ. ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ Որուն շնորհիւ շատցան ու զարգացան Օրաթերթերն ու Հանդէսները, և տեղական Մամուլը ցայտլայր չերեւակայուած առատութիւն ու պէսաղիտութիւն ստացաւ, միշտ նորանոր յառաջգիմութիւններու և զարգացումներու շաւղին մէջ:

Հետեւաբար, մեզի՝ Լրագրութեան համար ալ սիրելի պարտականութիւն մը ու բարեբաւոտիկ առիթ մըն է՝ անկեղծ թարգման հանդիսանալ Կայսերական Ծննդեան երջանկաբեր Տարեգարհին առթիւ արտայայտուող ընդհանուր ցնծութեան ու երախտագիտութեան և սրտեռանդն ձայնակցիլ ամէն կողմէ բարձրացող ջերմագին բարեմաղթութեանց

ՅԱԻԷՏ. ԿԵՅՅԷՔ՝

ՎԵՀ. ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՄՍԵՐ

ՄԵԾԱՆՈՒՆ ԻՆՔՆԱԿԱԼՆ ԹՈՒՐԳԻՈՑ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

— 202 —

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ



1. Աշխարհագրութիւն պատկերագրող. Տարական Ա. և Բ. տարիներու. Արրահամ 3. Հայրիկեան. տպ. Ն. Կ. Ֆրգլերեան. 1902. — 2. Պատկերագրող նոր Աշխարհագրութիւն. Բ. մաս. աշխարհագրութիւն Օսմանեան կայսրութեան. Հրանտ Ս. Խանճեան. Նախակրթութեան բարձրագոյն. Կ. Պոլիս. Գրատուն Նշան-Պապիկեան. 1902. — 3. Առեւտրական-Տնտեսական աշխարհ. Պատրաստեց Կ. Ս. Թուխանեան. Իզմիր Տպ. Մամուրեան. 1902.

Գ.

Թուխանեանի գործը իր նպատակին տեսակէտէն դատելով կու գայ կարեւոր պէտք ընդ լրացնել. Գործնական դաստիարակութեան, առեւտրական մարդերու պատրաստութեան, և տնտեսական ու գրական խնդիրներու կարեւորութեան անհամեմատ ներդրեանները, որոնք սովորական յանկերդի մը պէս պարբերաբար կու գան ողողել լրագրական հրատարակել, եթէ ոչ ուրիշ բաներով գէթ դաստիարակութեան զէպի այդ ձգտելովը և մեր գրականութեան ու լրագրական աշխարհին մէջ գրականութեան ներշնչութեամբ կրնայ ըլլալ Այս տեսակէտով, աշխարհի տնտեսական-առեւտրական շարժումը ծանօթացնող որ և է գործ որ մասնաւոր կ'ընէ, անհրաժեշտ է որ մասնաւոր կարեւորութեամբ մը նկատողութեան առնուի. Կծու կերպով օր մը հեզնած է Յ. Պարոնեան գրախօսական գրող եկեղեցական մը որ յաճախ գրքին ներքեւը ձգելով արտաքինովը կը զբաղէր, անոր կողքը և պատգամութիւնը խնդրի առարկայ կ'ընէր. եթէ այդ հեզնութեան յիշատակը մաքիս մէջ եղած չըլլար, մէկ անգամէն պիտի ըսէի թէ Թուխանեանի գործը շատ անխմած ապագայութեամբ մը հրատարակուած է, մաշած զիւրով և սխալներով լեցուն. Բայց այս արտաքին պարագան մէկ կողմ կը թողում. Երբեք կազմութեան անխնամութեանը և գրականարգութեանը մէջմտի ու զիւրմտեան լիութեան տեսակէտով ունեցած թերութիւնը

ներուն հանդէպ որոնք թուելով թերեւս չըսպառին :

Նախ հեղինակին խօսքերուն վրայ հիմնուելով ըսենք թէ իր բարեկամներէն մէկուն թելադրութեամբ միջամուխ եղած է այս գործին՝ պատրաստելով զայն հետեւողութեամբ V. Deville-ի Առեւտրական Աշխարհագրութեան և օգտուելով Կ. Պոլսոյ Ֆրանս. Առեւտր. Սենեկի 1899ի Bulletin-էն, Almanach Hachette-էն, քանի մը անդիւրեակ և վեհապետական հեղինակութիւններէ և... հայերէն օրաթերթերէ : Այս վերջինները գիտէինք թէ շատ մը բաներու կրնան ծառայել, բայց երբեք չէինք կարծիք որ Առեւտրական Աշխարհագրութեան մը աստղծները կարենային պատրաստել. Աղբիւրներու այս անհաշտ և անբարեխառն խառնուրդէն գիրք մը կազմելը և ճարտարութիւն կը դառնար, ուրիշներ ինչ որ ուզեն թո՛ղ անկա ըսեն. Ասկէ զատ, հեղինակը իր զբօսանքի և հանգիստի ժամերէն զոնցովութեամբ առնուած պահերու մէջ մարմնաւորած է այն գաղափարը զոր իր բարեկամը յղացեր է եղեր և ազնուութիւնը ունեցեր է զայն գաղափարին արտօնը նուիրելու :

Թուխանեան նոյնպէս իր գրքին սեմին վրայ իսկ քաջութիւն կ'ունենայ խոստովանելու թէ յաւակնութիւն չունի « լիակատար և մասնագիտական անթերի գործ մ'ըրած ըլլալու, որովհետեւ ոչ մասնագէտ մ'եմ, ոչ ալ լայն միջոց ունէի ընելու համբարատար և մանրախոյզ պրպտումներ » : Այս խոստովանութիւնը ինքնին չմեղացում մըն է որով հեղինակը կարծես կը նախապատրաստէ ընթերցողը թերի գործի մը որուն այնպէս եղած ըլլալուն առաջին համոզուողը ինքն է. Եւ ըսեմ թէ ասիկա պատուաբեր երաշխաւորութիւն մը չէ հեղինակի մը համար, վասն զի հեղինակ մը գէթ ինքը համոզուած ըլլալու է իր գործին կարելի եղածին չափ կատարելով ըլլալուն և այդ համոզմամբ միայն հրապարակ հանելու է զայն :

Թուխանեանի գործը դասագիրք մը չէ, որովհետեւ դաստիարակութեան ո՞ր տեսութեամբ պիտի արդարանար այսքան անհատնում թուանշաններ պարունակող գիրք մը

ուսանողներու ձեռքը տալը : Դասագիրք մը իրաւ է թէ մէթոտի տեսակէտով աւելի բազմապահանջ գործ մըն է , բայց դասագիրքի հանգամանք չունեցող այս տեսակ գործ մը ոչ նուազ դժուարակնճիւ բան մըն է որուն պատրաստութիւնը ոչ նուազ խնամք , ոչ նուազ ուշադրութիւն եւ ինչ որ աւելին է , լեցունակեկ ալ հմտութիւն մը կը պահանջէ :

Թուխմանեանի գործը ո՛չ դասագիրք է եւ ո՛չ ալ անոր հակառակը : Միջին ուղղութիւն մը բռնելու մարմաջը՝ ինչպէս շատ մը ուրիշ պարագաներու մէջ՝ նոյնպէս եւ հոս վիժած մը արտադրած է : Որոշ ուղղութիւն մը եւ հեղինակաւոր չեղած մը կը պակաս գործին մէջ որուն աղբիւրներն ալ մասնակի կերպով դասական են եւ ուրիշ մէկ մասով՝ ոչ-դասական :

Եթէ դասագիրք մը պատրաստել կ'ուզէր՝ կարի սակաւախօս եւ բնաւ ճապաղ ըլլալու էր : Մինչդեռ պիտի տեսնենք թէ բոլոր իրարու խառնուած , մէկ երկրին վրայ խօսուած ատեն միւս երկրներու հետ բազդատութիւններու եւ շրջումներու մէջ կորսուած եւ իրարու խառնած է , այնպէս որ երբեք իբր դաս աւանդել կարելի չպիտի ըլլայ այս հիման վրայ պատրաստուած գործ մը :

Այսպէս , օրինակի համար , Ֆրանսայի վրայ խօսած ատեն՝ հեղինակը զայն կը բազդատէ զրեթէ բոլոր Եւրոպայի հետ : Ֆրանսայի հողի անմշակ մասին համեմատութիւնը յիշած ատեն , Անգլիոյ , Պէլճիքայի եւ Գերմանիոյ անմշակ հողերուն համեմատութիւնն ալ կը թուէ : Ֆրանսայի առաջինի մշակութեան վրայ խօսած ատեն՝ արմաթք արտադրող մեծագոյն երկրները իրենց արտադրութեանց քանակութեամբ կը յիշէ , եւ անբմբռնելի շրջումով մը Ամերիկէն Ասիա բոլոր տէրութեանց արմատեաց ներածութեանը եւ արտածութեանը վրայ կը խօսի (էջ 26-27) ինչպէս նաեւ հիւսուածանիւթերու , ձակնդեղի , գայլակի , բանջարական մշակութեանց , ծաղիկներու եւ պտուղներու , այգեգործութեան , անասնաբուծութեան , ընտանի անասուններու , անտառներու եւ հանքային հարստութեանց եւայլնի վրայ , միշտ զանոնք բազդատելով բոլոր աշխարհի զանազան մասերուն հետ : Ասիկա թերեւս այն պատճա-

ռով որ իրեն առաջնորդ ընտրած գիրքը — Ֆրանսացւոյ համար դրուած — այնպէս ըրած է , մինչդեռ մեր տեսակէտով նոյն բանը միայն Թուրքիոյ համար թերեւս ներկի եղած ըլլալու բայց պէտք է ըսել թէ ասիկա միայն Ֆրանսայի համար չէ որ պատահած է , այլ ուրիշ երկրներու համար ալ : Այսպէս , Անգլիոյ բաժնին մէջ աշխարհի զանազան ազգաց նաւերուն թիւը իրենց տեսակովը եւ տարողութեամբ կը թուէ , մինչդեռ Իւրաքանչիւր տէրութեան բաժնին մէջ մոռցած է շատ անգամ անոնց ունեցած շողենաւներուն թիւը զինչ : Այս անտեղի շրջումներուն եւ գրքին դասագիրքի բոլորովին անյարմար ձեւով խմբագրուելուն պատճառաւ՝ զայն իբր դասագիրք նկատել բոլորովին սխալ է , եւ պէտք է որ ուրիշ հանգամանքով մը նկատուի :

Բայց այդ տեսակէտով ալ ժողովրդին պէտքերը լրացնելու հանգամանք ունեցող գործ մը չէ այս գիրքը որ , ինչպէս իբր դասագիրք խառնակ՝ նոյնպէս իբր որ եւ է գիրք խառնակ ըլլալէ չզաղորի , մանաւանդ որ դիտական ճշգրտութեան եւ ժամանակից պատճառախոյ տեսութեանց եւ ուսումնական դիտողութեանց երբեք յարմար կազմութիւն մը չունի : Նախ չկորսուելու համար այն խառնակութեան մէջ զոր հեղինակը իր աշխատասիրութեամբ մեր աչքին առջեւ կը դնէ , պէտք է ըսել թէ Վոսսիւն վրայ միայն խօսիլ բաւական պիտի ըլլայ՝ պարզելու գիրքին ողին որ առաջին ձախողւածի մը շարունակական ընթացքն է :

Առեւտրական եւ անտեսական աշխարհը ծանօթացնող գիրքի մը ներածութիւնը երբեք պէտք չէ որ այնքան չոր ու ցամաք կազմութիւն մը ունենար , Ընդհակառակը , այնպէս կը կարծենք թէ պէտք էր խօսիլ աշխարհի զանազան մասերու բնական մասին վրայ — առանց մոռնալու անոնց ներգործութիւնը՝ անտեսական եւ առեւտրական գործունէութեան վրայ — բաւական ընդարձակ կերպով եւ ոչ այնպէս ինչպէս ըրած է ինքը , շատ աննշան համառօտութեամբ մը ներկայացնելով զանոնք :

Այսպէս Աշխարհի առեւտրական մեծ նաւթաւերը վերնագրով մասը (գլուխ 2.) որ ըստ բաւականի յաջող կրնայ համարուիլ , լիակա-

ապր ըլլալու բաղդը չէ ունեցած : Պէտք էր ,
բայտ իս , բաւական լիառատ կերպով բացատ-
րուած ըլլային աշխարհի առեւտրական շարժ-
ման թելադիր պատճառները , վաճառակա-
նութեան՝ ազդերու վրայ ունեցած ազդեցու-
թիւնը , եւ համառօտիւ՝ վաճառականութեան
զարգացման զանազան շրջանները եւ զանա-
զան արշաւանքներու ու պատերազմներու
անտեսական զարգացման բերած նպաստները
կամ հակազդեցութիւնները :

Առանց գիտնալու թէ ընական ի՞նչ նպաս-
տաւորեալ պայմաններու արդետիք են ար-
տադրութեանց լիառատ հանգամանքը , եւ
թէ ի՞նչ բան կը ստիպէ մարդիկ այն փոխա-
նակութեան որ վաճառականութեան տեղի
կու տայ , ի՞նչ պայմաններ այդ փոխանակու-
թիւնը կը գերապնեն , թէ ի՞նչ է ծովային
երկրի մը առաւելութիւնը եւ թէ ի՞նչ են ցա-
մաքային երկրի մը դժուարութիւնները , եւ
ընական աշխարհագրութեան առեւտրականին
վրայ ունեցած ազդեցութեան յայտնի պատ-
ճառները , աւելորդ բան է ճանաչները սոր-
վեցնել եւ նաւարկութեան մեծ գիծերը (Պլ. է.)
ու ընդծովեայ պարսնները ցոյց տալ :

Եւ այս թերի ներածութեան ու նախա-
պատրաստութեան վրայ հիմնուած՝ ընթերցողը
պիտի կարգայ զանազան երկիրներու վրայ
խօսող յատուկ հատուածներ՝ որոնք աշխարհի
մէջ ընական բաժանումներուն կարգովը դա-
ւաւորուած են եւ ո՛չ ալ անտեսական զար-
գացման առաջնութեան կարգովը : Ֆրանսա ,
Իտալիա , Աւստրիա-Հունգարիա , Պալքանիան
Պետութիւնք , Ասիական Թուրքիա , Ափրիկ-
եան Թուրքիա , Ալճերի , Թունուզ , Եգիպտոս ,
Սուտան , Եթովպիա , Միջերկրականի անգ-
լիական ստացուածքները առաջին մասը կը գրա-
ւեն : Ռուսական կառավարութիւնը՝ իր բոլոր
ձառնորդը , եւ Իրանեան լեռնադաշտը՝ երկ-
րորդ մասը , Հարաւ-Արեւելեան Ափրիկէ եւ
Պարագոյն Արեւելք՝ երրորդ մասը , Սինգ-
ապուր , Պենճիք , Հոլանտա , Գերմանիա ,
Ջուրճերիա , Սքանտինավիա , Սպանիա ,
Փորթուգալ , Մարոք , Սահարա ; Արեւմտեան
Ափրիկէ եւ բոլոր Ամերիկան՝ չորրորդ մասը ,
ու Ուկրանիա հինգերորդ մասը կը կազմեն ,
առանց չափ որոշ պատճառաբանութեան եւ

համոզիչ փաստերու : Լաւագոյն ձեւը պիտի
ըլլար ընական աշխարհագրութեան ընդունած
բաժանումներուն վրայ ձեւել այդ առանձնա-
կան հատուածներուն կազմութիւնը , եւ Եւ-
րոպական կառավարութիւններէն սկսիլ ու
այսպէս շարունակաբար առաջանալ :

Ասկէ զատ , փոխանակ իւրաքանչիւր երկ-
րի վրայ խօսած ատեն անհարկի բաղդատու-
թեանց խելամուլու — ինչպէս մէկ երկու
օրինակ տուինք — լաւագոյն բան մը պիտի
ընէր հեղինակը եթէ աշխարհի հինգ մասերուն
վրայ ալ մէյմէկ ընդհանուր տեսութիւն ընէր
ուր բաւական ընդարձակ կերպով բաղդատու-
թեան եւ համեմատութեան զնէր զանազան
երկիրներու մշակութեանց քանակը եւ հան-
գամանքը , վաճառականական շարժումին՝ նե-
րածութեանց եւ արտածութեանց քանակը ,
բուսական եւ հանքային արտադրութիւնները
եւ այլն , եւ ասով ընդհանուր ու ամփոփ գա-
ղափար մը տար ընթերցողին , միանգամայն
օրինակելի կոկիկութիւն մը գործին : Հիմա
ընթերցողը , զոր օրինակ Եւրոպայի վուշ ար-
տադրող երկիրներուն վրայ գաղափար ունե-
նալու համար , Ֆրանսայի մասը պէտք է կար-
դայ (էջ 28) . մետաքս արտադրող երկիրները
հասկնալու համար Ջինաւսաւնի մասը (էջ 150) ,
զանազան երկիրներու հանքային հարստու-
թեան արտադրութեան արժէքին բաղդատա-
կան համեմատութեան վրայ գաղափար մը
ունենալու համար Անգլիոյ մասը (էջ 169) .
իւրաքանչիւր հանքի արտադրութեան թօնոն՝
նոյն մասը (էջ 170) . չոգենաւներու թիւը՝ նոյն
մասը (175) , ինչ որ փոքր անպատեհութիւն մը
չէ , մանաւանդ ըր ամէն մարդ համբերու-
թիւն չկրնար ունենալ երկար բարակ փնտը-
ռելու :

Եւ զիւրըմբռնելի չըլլալու պարագան մէկ
կողմ ձգելով , արդէն ինքնին անպատեհու-
թիւն մըն է մէկ երկրի մը վրայ խօսուած
ատեն շրջումներով զայն բաղդատութեանց
առարկայ ըսել :

Այդ բաղդատութիւնները պէտք է ընդ-
հանուր տեսութեան մը կամ համայնացոյց
պատկերի մը հանգամանքը առնեն : Եւ այս
այնքան կարեւոր էր որքան ըլլալ երեւա-
կայած է Պ. Թուխմանեան «Դեղին վտանգ»

ըստեւած առաջագիտային վտանգը որ չնորհ կը գտնէ իր գրքին մէջ արձանագորութեւ, առանց գէթ պատշաճ տեղ մը արձանագորութեւ ըլլալու : Եւրոպայի անտեսականներն վրայ բան մը ըսած ըլլալու համար միայն այդ գեղին վտանգը մատնանիչ ընել յարմար տեսիլ է, ա'լ կրնաք երեւակայել թէ այս տեսակ գործի մը արժէքը ինչ կրնայ եղած ըլլալ :

Թո՛ղ ներքին ընթերցողները որ մանրամասնաւթեանց իջնալէ խուսափինք, որովհետեւ լեզուական խառնակութեան քով նոյն իսկ աշխարհագրական անհնթեթեթութիւններ՝ սկսեալ (էջ 79) Առշիպեղսագոսի եզերիք գտնուող Պանքրուս քաղաքէ մը (‘.‘.‘) մինչեւ չեմ գիտեր ս'եր, եւ թուական այնպիսի անհամաձայնութիւններ կան զորս թուել շատ երկար պիտի ըլլայ : Այդ թուանշանները որոնք զբրքին ամէնէն կարեւոր մասը կը կազմեն՝ եթէ սխալներով լեցուն իսկ չեն, ունին ուրիշ պակասութիւն մը որ արդէն գործին ամբողջութեանը մեծապէս կը վնասէ : Այդ անպատեհութիւնը՝ անոնց բաղդատութեան իւրաքանչիւր ցուցակներուն եզրերը համապատասխան տարիներու արդիւնք չըլլալն է : Առնուազն 20 տարուան մը ետառաջութեամբ բաղդատութիւններ եղած են, մինչդեռ կատարեալ գործի մը համար համեմատութիւնները միւսնոյն տարուանը պէտք է ըլլան : Եթէ ասիկա կարելի չէ, գէթ մերձաւորապէս պէտք է իրարու պատշաճին, պայման մը՝ զոր չէ չըցած լրացնել Թուրմանեան իր գործին մէջ :

Այս քանի մը ընդհանուր դիտողութիւնները բաւական են արդէն պէտք եղած գաղափարը տալու գործին ամբողջութեանը վրայ որուն հանդամանքները այնքան անորոշ ձեւ մը եւ այնքան աննախանձելի կազմութիւն մը տուած էին իրեն :

Յատուկ նախապատրաստութեամբ մը երեւան ելած գործի մը երեւոյթը չունի գիրքը եւ այս թերութիւնը գրքին մէկ ծայրէն միւսը կ'երեւայ : Մասնագէտներ չըլլալու խոստովանութեամբ մասնագիտական ձեռնարկի մը վիժումը չարդարանար, վասն զի ասիկա հեղինակութեան ինքնակոչ մարմանէն ծնած յայտնի կամակորութիւն մը ցոյց կուտայ :

Եւ ասիկա չպիտի ուղէինք տեսնել որ եւ է հայ հեղինակի վրայ :

Ս. ԱՆԳԵՂԵԱՍԵ

ԱՏԵԼՈՒԹԻՒՆՆԵՐՍ

Զղջացեր եմ, իրա՛ւ որ զղջացեր եմ գրել սխեւուս վրայ : Թէեւ քմահաճոյքով, սակայն ուրախութեամբ մը, տեսակ մը զուարթ ժպիտով գրիչը ձեռքս կ'առնէի, Շորէնի երրորդ պաշտպանը ստրատալով նուագելէս ետքը : Ու միշտ այսպէս ըրած եմ, Երաժշտական այս սքանչելի կտորը լինցնելէս անմիջապէս ետքը, ներքին հզօր մղումներու բերումով գրել կը սկսիմ, ու այսպէսով արդէն կազմած եմ այն քերթուածներու հաւաքածոն, որուն Պառզառոջ վերնագիրը տուած եմ, կը պատրաստուէի հրատարակութեան տալու զայն, պահ մը ընկրկեցայ, երեւակայելով այն այլազան ու գունիկ ծամածռումները, որոնք պիտի գծուին պարկեշտասուն ընթերցողներուն դէմքին վրայ :

Եւ ասիկա տակաւին չըրած է որ նամակներ կը ստանամ, խորատներ կը լսեմ, աղջկան գոյութեանս ու իրաւունքներուն չուրջը, իր թէ կեանքիս մէջ վայրկեան մը զղջացած ըլլալի գեղեցիկ սեռին պատկանելու համար : Դիտե՛ք ինչ կ'ըսեն անոնք : — «Ի՞նչ աղջիկ ես, դուն քու գործդ նայէ, զրակահոթիւնը աղաքներուն ձգէ՛, Դուն քու Շորէնդ ու Մէնտէլընդ ուսումնասիրէ՛» : Ուրի մը. — «Տեսած էի զորդ կարգացող աղջիկներ, բայց քեզի պէ՛ս չէի տեսած : Մտի՛ Յովհաննէսեան եւ . . . Զօր՛, Խենդեցա՛ր, Զէ՛, Բարեկամուհիս, չէ՛. ասանկ անբարոյական յօդուածներու տակ անգամ մըն ալ մի՛ ստորագրեր : Բեզլի՛ մեղք կ'ընես» :

Եթէ չամչնայի, ձեռքերնի՛դ պիտի պագնէի, աղնի՛ւ խրատատուներս :

Բայց ասոնցմէ, այս խրատներէն չառնուեցայ բնաւ : Ընդհակառակը, տգեղութիւնները, ապիկարութիւնները, միջակութիւնները ատելուս ուրիշ չարմատիթ մը եւ ուրիշ ապացոյց մըն ալ դատայ : Բայց այս յօդուածը ինծի ներշնչեց այն նամակը, զոր ծանօթ գրող մը զրկած է ինծի, եղբորս միջոցաւ :

Անունը պիտի չտամ այդ գրագէտին :

Տէսէ՛ք ինչ կը գրուի ինծի :

«Աղնիւ օրիորդ , վերջին յօգուածդ կարգացի : Բարկութիւնս չեմ կրնար զսպել : Գործ չունի՞ս որ աստանկ խնդի ու խելառ բաներ կը դրես : Աղջկան մը ամօթ չէ՞ նանար անբարոյական ու լկտի հեղինակին վրայ գրելը : Կը հասկնամ Կանանց Բաժինը , կը հասկնամ նաեւ որ կին մը կրնայ իր բարեկամութիւնն մահուան մէկ քանի տող նուիրել , բայց ուղեղիս մէջ չկրցայ սղմեցնել սա քու ըրածդ : Գործ չունի՞ս , գոնէ արեւին հետ խաղա , եւ եթէ կ'ուզես , սրուակի մը մէջ ալ բանտարկէ՞ դայն , ասով թէ՛ դուն կը զուարճանաս եւ թէ՛ մեզի ալ կը զուարճացընես : Ուղեցի հրապարակաւ գրել քեզի , բայց մեղքայ : Խօսք տուր որ ա՛լ աստանկ յօգուածներ չպիտի հրատարակես քնաւ » :

Միւսները ինծի կը պահեմ : Ես իրմէ աւելի՛ անկեղծ եմ , իրեն հրապարակաւ պատասխանելու համար : Կեղծաւորները :

Սիրելի գրագէտ , թողէ՛ք որ ձեզի՛ ալ ասեմ , անխելքներու եւ ռատեներու այն խաղաղիչ վոնմակին հետ որով չըջապատուած ենք ամէն գրողներս ալ գրեթէ : Ու կը ցաւիմ որ երկարօրէն քեզի հետ վիճաբանելու չունի չունիմ : Եւ ինչո՞ւ պահեմ , չունիմ նաեւ այն չնաչխարհիկ կարողութիւնը , որ . . . զաս տալ կը ներշնչէ մարդուս :

Եւ կ'ըսէի որ զղջացեր եմ գրել սկսելու վրայ : Այո՛ , զղջացեր եմ : Ու ընկրկում մը , ցուազին ընկրկում մըն է որ կը գրկէ ամբողջ մարմինս . Ծօբէնի Fantaisie-impromptu , Մէն-Սանսի Զրեկեղը , Էմիլ Բրիւտանի Պարիկներուն Զարթնումը ձգել եւ գրականութեան ետեւէն վազել , օ՛հ , ինծի համար պարպալ բան է ասիկա : Գի՞րք : Լիթի Rhapsodies Hongroisesի երկրորդ մասը՝ հովուերգական գիրք մը կ'արժէ աչքիս : Եւ Շուպերի Ռօզեմարիսը աւելի՛ անուշ , աւելի՛ փափուկ է քան Կազալիսի Մեղանգօղիան : Ինչո՞ւ ձգեմ Մօցարթս , Ռիւմօշլժանս , Մէն-Մէլլան , Պէթովնիս եւ բոլոր արդի նուագադարները , որոնք իրենց Սօնարները , Յայգերգները , Impromptuները , Անըցանկները , Յանքեղիները , Գաբրիւները ունին , եւ որոնք բոլորովին իրարմէ տարբեր զգայնութիւններով արտադրուած են :

Եւ համոզուեցէք որ Հէնսըլտի էքլիս-ները շատ աւելի բանաստեղծական են քան ո՛ր եւ է քերթուածի գիրք :

Pensez un peu à moi

Qui pense toujours à toi .

Սիրերգական զգլխիչ հրապոյր մը չէ՞ք նշմարեր այս երկու տողին մէջ : Եւ յետոյ ,

Si oiseau j'étais

A toi je volerais!

Փափուկ ու մետաքսէ փետուրներով սիրուն թռչունի մը ճողողումը չէ՞ք լսեր այս կտորը նուագած աստեղնիդ : Եւ բոլոր միւս կտորներն ալ , — «Tu m'attires, m'entraînes, m'engloutis!» , — «Jeunesse d'amour, plaisir céleste , ah tu t'enfuis! mais la mémoire nous reste,» — «Comme le ruisseau dans la mer se répand, ainsi, ma chère, mon cœur t'attend,» — ամէնքն ալ իրարմէ ազուոր , իրարմէ մաքուր բան մը չունի՞ն իրենց մէջ , ըսէ՛ք :

Ու ասոնք նուագած աստեղն ալապաստրէ չքեղ երազի մը մէջ փոխադրուած կը զգամ ինքզինքս , բերեղէ այն լուսաւոր դղեակին մէջ , ուր կապոյտները , լոյսերը , փրփուրները , ժանեակները , թրթռումները իրարու միացած՝ անհունապէս գեղեցիկ , անըջային երգ մը կը համերգեն :

Եւ այդ անխելական ու փաղփուռ երազէն այս իրական աշխարհը ոտնուրը , ճշմարիտ անկում մըն է , սոսկալի դահաժիժում մը , որուն դողերովը պիտի գալարուէր հոգիք անպատճառ :

Ու զղջացեր եմ , իրա՛ւ որ զղջացեր եմ գրել սկսելու համար :

ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Թատրոնական գործը յաջող սկզբնաւորութիւն մը չէ ունեցած այս տարի Պաքուի մէջ , ինչպէս կը տեղեկանանք : Առաջին քանի մը ներկայացումները արուեր են կիսովին թափուր սրահի մը առջեւ : Այս անշարժութեան զլիւսուոր պատճառն է բացակայութիւնը Տիկին Սիրանոյշի որուն հետ պայմանագիր չէ կնքեր Թատրոնական Մասնախումբը՝ ճշդ-ճիմ հաշիւներու եւ անձնական նկատումներու հետեւանքով : Տիկին Սիրանոյշ հրաւիրուեր է քանի մը ներկայացում տալ Թիֆլիսի մէջ :

ԳԵՐՄԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԼԱՌԻՐԵԼԼԱ

Վ. Է. Պ. ԲԱՌԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ

Թիւ 1

Ա.

Արեւը ծագած չէր դեռ :

Վեստովի վրայ զիգուած էր ամպերու խաւ մը՝ լախ ու թուխտ՝ որ կը տարածուէր դէպ ի վար, դէպ ի նարսի, ու կը մթագնէր եզերային շերտին փոքրիկ քաղաքները : Ծովը հանդարտ էր : Բայց վարը, ծովախորշը որ կը գտնուէր անձուկ ծոցի մը մէջ՝ կազմուած Սորէնթի եզերային բարձրաբերձ ժայռերէն՝ ձկնորսները արդէն կ'աշխատէին իրենց կիներուն հետ՝ խոշոր մալուխներով ցամաք քաշելու նաւակները, ուռկաններով զորս ծովը նետած էին, գիշերը ձուկ որսալու համար : Ուրիշներ կը պատրաստէին իրենց նաւակները, կը պարզէին առագաստները, վանդակապատ խոռոչներու մէջէն զորս ժայռերուն խորը չինած էին, գիշերը անոնց մէջ նաւային գործիները պահելու համար, դուրս կը քաշէին թեւճակներ ու կայմեր : Ո՛չ մէկը անգործ կ'երեւնար. որովհետեւ ձերերն ալ՝ որոնք ալ բնաւ նաւավարութիւն չէին ընել, իրենք զիրենք միացուցած էին այն մեծ շղթային որուն անդամները կը քաշէին ուռկանները. հոս, հոն, տափարակ տանիքի մը վրայ, կը կանգնէր մամիկ մը՝ աղեկատ մը ձեռքը, կամ կը զբաղէր իր թռնիկներով, մինչ աղջիկը կ'օգնէր ամուսնոյն :

— Կը տեսնե՞ս, Ռաքելա, ահա՛ հոն է մեր հայր Բուռաթօն, կ'ըսէր պառաւ մը պղտիկ լաճի մը, տառը տարեկան, որ անոր քով իր աղեկատը կը շարժէր. դեռ հիմա մտաւ նաւակին մէջ. Անթոնինօն պիտի տանի զայն դէպ ի Քարաի, Ս. Կոյս Մարիամ :

Ու ձեռքով նշան մ'ըրաւ պղտիկ, բարեհամբոյր քահանայի մը որ վարը դեռ նոր կը տեղաւորուէր նաւակին մէջ, իր սեւ վերար-

կուն խնամով վեր տռնելէ ու փայտէ նստաբանին վրայ տարածելէ ետքը : Միւսները, ծովափին վրայ, դադրեցուցին իրենց աշխատանքը, զիտելու համար իրենց հովիւին մեկնումը, որ բարեսիրութեամբ նշան կ'ընէր եւ կը բարեւէր աջ ու ձախ :

— Բայց ինչո՞ւ համար Քարաի կ'երթայ, մեծ-մայր, հարցուց աղան : Ան տեղացիները ժողովրդապետ չունի՞ն հոն որ կը ստիպուին մերինը փոխ առնել :

— Այդչափ միամիտ մի՛ ըլլար, ըսաւ պառաւ : Անոնք իրենց պէտք եղածը ունին, ու նաեւ ամենագեղեցիկ եկեղեցիներ եւ մինչեւ իսկ ճգնաւոր մը որուն նմանը մենք չունինք : Բայց հոն կը գտնուի նշանաւոր սինիօրա մը որ երկար ատեն հոս՝ Սորէնթ բնակած է, ու շատ հիւանդ էր, այնպէս որ հայր Բուռաթօն յաճախ կը ստիպուէր Հաղորդութիւնը հետն առած երթալ, երբ կը մտածէին թէ ա՛լ չի կրնար գիշերն անցընել : Հիմա Ս. Կոյս Մարիամը անոր ողորմեր է, այնպէս որ ան նորէն առոյգ ու առողջ եղած է՝ ամէն օր ծովուն մէջ լողնալու կարող : Երբ ասկէ մեկնեցաւ անդիի կողմը, դէպ ի Քարաի, կոյտ մը առաքաթ նուիրեց եկեղեցիին ու աղքատ ժողովուրդին, եւ շուղեց երթալ, կ'ըսեն, մինչեւ որ հայրը չխոտացաւ հոն անոր այցելութեան երթալ : Երկու օր ան կարողանայ խոստովանիլ : Որովհետեւ մարդուս զարմանք կը պատճառէ թէ ո՛րչափ համարում ունի ան Տէր Հօրը վրայ : Ու մենք կրնանք ինքզինքնիս երջանիկ համարիլ զայն ժողովրդապետ ունեւալ-նուս, որ շնորհք ունի արքեպիսկոպոսի մը չափ եւ զոր կը փնտռեն իշխաններն անգամ : Մտածան իր հետը ըլլայ :

Ու այս խօսքերով նշան ըրաւ դէպի վարի նաւակը որ դեռ նոր կը սկսէր հեռանալ ցամաքէն :

— Պարզ օդ պիտի ունենա՞նք, որդեակ, հարցուց քահանան նաւավարին ու դէպի նարոյի նայեցաւ մտախոհ :

— Արեւը ելած չէ դեռ, պատասխանեց կայտառ երիտասարդը. բայց ապահովապէս պիտի կրնայ գլուխ ելլել սա պատառ մը մտախոհին հետ :

— Ուրեմն արա՛գ թիւովարէ որ տաքը չի կոխած հասնինք :

Հազիւ թէ Անթոնինօ բռնեց երկայն թեւ-ճալինքը, նաւակը բաց ծովուն վրայ մղելու համար, ահա՛ յանկարծ ուշադրութիւն դարձուց ու դիտեց դէպի վեր բարձունքը զտոբլար ճամբուն որ կը ձգուէր Սորէնթ փոքրիկ քաղքէն մինչեւ ծովախորշը :

Վերը տեսնուեցաւ գեղուղէշ հասակով աղջկան մը կերպարանքը, որ քարէ սանդղակներէն վար կ'իջնէր փութով, ու թաշկինակով մը նշան կուտար : Թեւին տակ պզտիկ ծրար մը կը կրէր ան. զիմպիծերը բաւական համարձակ էին : Ազնուական երեւոյթ մը ունէր, միայն քիչ մը վայրագ ձեւ մը ունէր՝ գլուխը դէպի ետ ձգելու, եւ սեւաթոյր գանգուրները՝ զորս կը կրէր ճակտին շուրջ ուրրած, կարծես պսակը կը կաղմէին :

— Ի՞նչ բանի կը սպասենք, հարցուց ժողովրդապետը :

— Ահա դէպի նաւակը ուրիշ մէկն ալ կու գայ, որ ապահովաբար կ'ուզէ Քաբոի երթալ : Եթէ կը ներքէք, հայր, զայն ալ մեր նաւակը առնենք. այս պատճառաւ աւելի դանդաղ չպիտի երթանք, որովհետեւ դեռաւոր աղջիկ մըն է եկողը՝ հազիւ տասնութ տարեկան :

Նոյն վայրկենին աղջիկը դուրս ելաւ պատին ետեւէն՝ որ կը փակէր ուրապտոյտ ճամբան :

— Լաուրէլլան, ըսաւ ժողովրդապետը. Քաբոի մէջ ի՞նչ գործ ունի ան :

Անթոնինօն ուսերը թօթուեց : — Աղջիկը կու գար արագ քայլերով ու իր առջեւ կը նայէր :

« Բարի լո՛յս, արրապպիաթա (1), պողա-ցին երիտասարդ նաւավարներէն ոմանք » : Անոնք ապահովաբար դեռ աւելին ալ պիտի ըսէին, եթէ Քուռաթոյի ներկայութիւնը զանոնք յարգանքի մէջ պահած չըլլար. որովհետեւ այն խրոխտ ու լուռ կերպարանքը որով աղջիկը ընդունեց անոնց բարեւը, այդ ժպիւրհները գրգռել թուեցաւ :

— Բարի՛ լոյս, Լաուրէլլա, կանչեց նաեւ ժողովրդապետը. ի՞նչպէս ես, կ'ուզես մեզի հետ հետ Քաբոի՞ գալ :

— Եթէ թոյլ տաք, տէր հայր :

— Հարցո՛ւր Անթոնինոյին, ան է նաեւ կին տէրը. վերջապէ՛ս ամէն մարդ աէրն է իր սեպհականութեան, եւ Աստուած տէր է մեր բոլորիս վրայ :

— Ահա կէս քարին, ըսաւ Լաուրէլլա, առանց նայելու երիտասարդ նաւավարին, եթէ ես ասով կրնամ միտին գալ :

— Դուն աւելի լաւ կրնաս գործածել այդ դրամը քան թէ ես, մուտաց բարի-ծաղիկ երիտասարդը, ու դէպի աջ հրեց նարինջներով լեցուն քանի մը կողովներ, որպէս զի տեղ բացուի : Տղան զանոնք պիտի ծախէր Քաբոի մէջ, որովհետեւ ժայռաւտ կղզին բաւական բան չարտադրեր՝ բազմաթիւ այցելուներուն պէտքը լրացնելու համար :

— Ես չեմ ուզեր ձրի երթալ, պատասխանեց աղջիկը, ու իր սեւ յօնքերը չարժեց :

— Եկո՛ւր աղջիկս, ըսաւ ժողովրդապետը. ան լաւ տղայ մըն է եւ չուզեր հարստանալ քու չնչին գրամովդ : Ահա, բարձրացիր — ու իր ձեռքը անոր երկնցուց — ու նստէ հոս, իմ քովս : Նայէ՛, ահա ան իր թիկնոցը հոն ձգած է, այնպէս որ քու տեղդ աւելի կաւ կուղ պիտի ըլլայ : Իմ տեղս այդչափ լաւ չպատրաստեց : Բայց երիտասարդութիւնը այդպէս կը վարուի արդէն : Պզտիկ աղջկան մը աւելի խնամք կը տանին, քան տասը հոգեւորականի : Է՛, է՛, ինքզինքդ չըմբռնեւ լու պէտք չկայ, Թոնինօ, այս է մեր տէր Աստուծոյն կարգադրութիւնը, որ նմանն զնմանն սիրէ :

Մինչ այս, մինչ այն, Լաուրէլլա նաւակը

(1) Արրապպիաթա՝ խալեքէն կը նշանակէ վայրագ կին :

եղած ու նստած էր, սակայն, առանց բառ մը ըսելու, թիկնոցը մէկ կողմ մղելէ հաքը՝ Երիտասարդ նաւավարը թիկնոցը այնպէս գետնը թողուց, ու ակռաներուն մէջէն բան մը մրմռաց։ Յետոյ ուժով մը բախեց եղերաթոււթին դէմ, ու պղտիկ նաւակը սլացաւ դուրս գէպի ծովածոցը։

— Ի՞նչ ունիս հոգ, ծրարիդ մէջ, հարցուց ժողովրդագետը, մինչ ա՛յ կը մղուէին ծովուն վրայ որ հիմա կը լուսավառուէր արեւուն առաջին ճառագայթներուն տակ։

— Մետաքս, բուրդ ու հաց մը, հայր։ Մետաքսը Բարսիլի մէջ պիտի ծախեմ կնոջ մը որ ժապաւէն կը հիւսէ, ու թուրղը՝ ուրիշի մը։

— Դուն ի՞նքեք ես մաներ։

— Այո՛, հայր։

— Եթէ՛ լաւ կը յիշեմ, դուն ժապաւէն գործել ալ սորվեր ես։

— Այո՛, հայր։ Բայց մօրս վիճակը գէշ կ'երթայ դարձեալ, այնպէս որ տունէն դուրս չեմ կրնար ելլել, ու մեր ալ վիճակը չի նեւներ հիւսելու մեքենայ մը գնել։

— Վիճակը գէշ կ'երթայ. ո՛հ, ո՛հ, բայց ան դեռ ոտքի վրայ էր, երբ ես Զատիկին ձեզի էի։

— Դարունը ամէնէն գէշ եղանակն է անոր համար։ Սոսկալի փոթորիկներն ու ցընցուկները պատահելէն ի վեր, մայրս ստիպուած է իր ցաւերուն պատճառով պառկած մնալ։

— Մի գաղտնիք արգիծելէ ու խնդրելէ, աղջիկս, որ Ս. Կոյս Մարիամը բարեխօսուած իւն ընէ, եւ առաքինի ու աշխատասէր եղիր, որպէս զի աղօթքդ լսելի ըլլայ։ — Ու դադարէ մը հաքը՝

— Երբ դուն վար դէպի ծովափը եկար, քեզի այօռացին. «Բարի լոյս, արրապպիւթա», բայց ինչո՞ւ քեզ այդպէս կը կոչեն. ատիկա գեղեցիկ անուն մը չէ քու տարիքդ աղջկան մը համար որ պէտք է քաղցրահամայր ու խոնարհ ըլլայ։

Թխագոյն աղջկան դէմքը բռնկեցաւ կարմրութեամբ մը, ու անոր աչքերը կայծեր արձակեցին։

— Անոնք կը ծաղրեն զիս, որովհետեւ ես, ուրիշներու պէս, չեմ պարեր, երգեր

ու շաղկիրատեր։ Անոնք պէտք է զիս թողուն որ անցնիմ երթամ. ա՛խ, ես անոնց բան մը չեմ ընեմ։

— Բայց դուն կրնաս հեղահամայր ըլլալ ամէն մարդու հանդէպ։ Պարել ու երգել կըրնան ուրիշները որոնց կեանքը աւելի դիւր է։ Տխուր սրտի մըն ալ, սակայն, կը վայելէ լաւ խօսք մը խօսիլ։

Աղջիկը վար նայեցաւ, իր առջեւը, ու ամփոփեց իր յօնքերը, իբր թէ անոնց տակ ծածկել ուզէր իր սեւ աչքերը, ժամանակ մը լուռ շարունակեցին իրենց ճամբան։ Արեւը շքեղօրէն կը կանգնէր լեռներուն բարձունքը, վիսուզի կատարը դուրս կը սլանար ամպերու խաւէն, որոնք չրջապատած էին դեռ անոր ստորոտը, ու Սորէնթիի դաշտին առանցքը կը շողային սպիտակափայլ, կանանչագարդ նարնջաստաններուն մէջէն։

— Այն նկարիչը վերստին լուր հառա՛ւ իր մասին, Լաուրէլլա, այն Նարոլիցին որ կ'ուզէր քեզ իրրեւ կին առնել, հարցուց ժողովրդագետը։

Լաուրէլլա զրուիւր թօթուեց։

— Այն ժամանակ եկաւ ան քեզմէ նկար մը պատրաստելու համար. ինչո՞ւ մերժեցիր։

— Բայց ի՞նչ բանի համար կը խնդրէր այդ բանը. ուրիշներ ինձմէ աւելի գեղեցիկ են։ Յետոյ, ո՛վ գիտէ ատով ի՞նչ բան առաջ պիտի քալեցնէր։ Ան այդպէսով պիտի կրնար զիս հմայել ու իմ հոգիս վիրաւորել, կամ զիս բոլորովին մահուան պիտի առաջնորդէր, կ'ըսէր մայրս։

— Մի՛ հաւատար այդպիսի մեղաւարտ բաներու, ըսաւ ժողովրդագետը լրջութեամբ։ Միթէ՛ դուն միշտ չե՞ս գտնուիր Աստուծոյ ձեռքին մէջ, առանց որու կամքին մաղ մը անգամ չիյնար քու գլուխէդ. եւ միթէ՛ մարդ մը իր ձեռքին մէջ այդպիսի նկար մը ունեւնալով՝ աւելի զօրաւոր եղած կ'ըլլայ քան Աստուծոյ։ — Ասկէ՛ դատ, դուն ապահովաբար կրնաս տեսնել որ ան քու բարիքդ կ'ուզէր։ Արգիօք ուղեց նաեւ հետդ ամուսնանալ։

Լաուրէլլա լռեց։

— Եւ ինչո՞ւ մերժեցիր. չնորհքով մարդ մը եղած պէտք է ըլլայ ու բոլորովին ալ

պերճ, այնպէս որ պիտի կրնար աւելի լաւ
կերակրել քեզ ու քու մայրդ, քան թէ դուն
կրնաս կտոր մը մանկելով ու մետաքս հիւ-
սելով :

— Մենք աղքատ մարդիկ ենք, ըսաւ
աղջիկը բռնուն չեղտով մը, եւ իմ մայրս ալ
այսչափ երկար տառնէ ի վեր հիւանդ է :
Մենք անոր վրայ բռն պիտի ըլլայինք : Երբ
իրեն այցելութեան գային, ինքը պիտի
ամչնար ինձմէ :

— Ինչե՛ր ալ կը մտածես, Ես ահա քեզի
ըսի թէ այդ երիտասարդը չնորհքով մարդ մըն
էր, ու ասկէ դատ ալ, կ'ուզէր Սորէնի փո-
խադրուիլ : Այդպիսի մէկը չուտով չի դար ու-
րիչ անգամ : Կարծես թէ ճիշդ երկինքէն զըր-
կուած էր՝ ձեզի օգնելու համար :

— Ես ամուսին չեմ ուզեր, երբե՛ք, ըսաւ
Լաուրէլլա բոլորովին խորխուրթեամբ ու
կարծես ինքնիրեն :

— Դուն ո՞ւր ես մը ըրած ես, կամ կ'ուզես
վա՛նք մը երթալ :

Լաուրէլլա գլուխը թօթուց :

— Մարդիկ իրաւունք ունին որ կը յան-
դիանեն քու ինքնահաճութիւնդ, թէեւ այդ
անունը գեղեցիկ չէ : Ձե՞ս մտածեր թէ աշ-
խարհիս վրայ միշտակ չես, եւ թէ քու այս
յամառութեամբդ աւելի կը դառնացնես քու
հիւանդակախ մօրդ կեանքն ու հիւանդու-
թեան օրերը : Դուն ի՞նչ զօրաւոր, պատճառ-
ներ կրնաս ունենալ՝ մերժելու ամէն բարե-
բաւ ձեռք որ կ'ուզէ թիկունք ըլլալ քեզ ու
մօրկանդ, պատասխան տուր, Լաուրէլլա :

— Հարկաւ ես ալ պատճառ մը ունիմ,
պատասխանեց աղջիկը մեղմով ու վարանու-
մով. բայց չեմ կրնար ըսել :

— Ձե՞ս կրնար ըսել, ոչ իսկ ինձի՞, ոչ
իսկ խոստովանածօրդ սրուն երբեմն ա՛յնչափ
վատահաճ ես եւ որ քու վրադ այնչափ լաւ
աչքով կը նայի :

Լաուրէլլա գլուխը շարժեց :

— Ուրեմն թեթեւեղութիւնդ, աղջիկս,
եթէ դուն իրաւունք ունիս, ես կ'ուզեմ
առաջինը ըլլալ քեզի իրաւունք տալու հա-
մար : Բայց դուն դեռ երիտասարդ ես ու քիչ
կը ճանչնաս աշխարհը, հետեւաբար կրնաս
ըլլալ ապագային, եթէ տղայական մտա-

ծումներով թեթեւամտութեամբ ձեռքէ հա-
նած ես քու երջանկութիւնդ :

Լաուրէլլա խուսափուկ ու վախկոտ ախ-
նարկ մը նետեց գէպի երիտասարդ նաւա-
վարը որ աշխուժութեամբ կը թիավարէր,
նաւակին ետեւի կողմը նստած, եւ իր բուրդէ
գլխարկը վար իջեցուցած էր մինչեւ ճակատը :
Անոր ականարկը կողմնակի յառած էր ծովուն,
ու այնպէս կը թուէր թէ՛ ան խորասուզուած
էր իր ներքին մտածումներուն մէջ :

Ժողովրդագետը նկատեց աղջկան ականաւ-
րը, ու ականջը անոր աւելի մօտեցուց :

— Դուք իմ հայրս ճանչցած չէք, շնջեց
աղջիկը, եւ աչքերը մթաղնեցան :

— Քու հայրդ. բայց անիկայ մեռաւ՝ երբ
դուն հազիւ տասը տարեկան կայիր դեռ :
Քու յամառութեանդ հետ ի՞նչ գործ ունի
հայրդ՝ որուն հոգին զբախտին մէջ ըլլայ :

— Դուք ճանչցած չէք զայն, հայր, դուք
չէք գիտեր թէ ան է միայն յանցաւոր՝ մօրս
հիւանդութեանը համար :

— Ի՞նչպէս :

— Որովհետեւ գէշ կը վարուէր մօրս հետ,
ծեծած ու զայն ոտքերուն տակ առած էր :
Ես կը յիշեմ դեռ այն գիշերները, երբ տուն
կուգար ու զայրացած էր : Մայրս բառ մը
չէր ըսեր ու կը կատարէր անոր ամէն փա-
փազները, Բայց հայրս կը ծեծէր զայն, բռն
մը որ իմ սիրտս կը փղծկեցնէր : Այն ժամա-
նակ ես գլխուս կը քաշէի վերմակը, եւ այն-
պէս կը ձեւացնէի թէ կը քնանամ. բայց
կուրայի ամբողջ գիշերը : Եւ երբ հայրս կը
տեսնէր զայն գետին ինկած, յանկարծ կը
փոխուէր, վեր կը վերցնէր ու կը համբուրէր.
այնպէս որ մայրս կը պոռար, իբր թէ պիտի
խեղդէր զինքը : Մայրս ինձի արդիւած էր որ
այդ մասին մէկուն բան մը չըսեմ : Բայց
հիւժուամբ այնպէս բռնած էր մայրս որ, հօրս
մահօրէնէն ի վեր, այսչափ երկար տարինե-
րէ հետէ, դարձեալ վերստին առողջացած չէ :
Եւ եթէ մայրս կանուխ մեռնելու ըլլար, ինչ
որ Աստուած պահէ, ես լաւ գիտեմ թէ ո՛վ
զայն մեռուցած պիտի ըլլար :

Կարճահասակ քահանան կը շարժէր գլուխը,
ու տարակուսիլ կ'երևար թէ մինչեւ ո՛ւր
իրաւունք պիտի տայ իրեն խոստովանող
աղջկան : Վերջապէս րոտ :

— Ներէ անոր, ինչպէս որ քու մայրդ ալ
ներած է. քու մտածումներդ մի՛ կապեր այդ
տխուր պատկերներուն, Լաուրէլլա, քեզի
համար պիտի դան աւելի լաւ ժամանակներ
ու մոռցնել պիտի տան ամէն բան :

(Շարունակելի)

ԿԵՍ—ԲԺՇԿԱԿԱՆ

— 000000 —

ԹՈՒՐԱՆՑԻՆ ԴԷՄ

Վերջերս — Հոկտ. 22-26 — Պէրլինի մէջ գումարուած Բժշկական Համաժողովը խիստ մեծ կարեւորութիւն մը ունի ո՛չ միայն բժիշկներու՝ այլ բոլոր աշխարհի համար, ամէնուս համար անխորի։ Համաժողովին նպատակն էր խորհրդակցութիւն մը կատարել եւ հիւսնաքանակներ ընտրել, որոնք թոքախտէրէն, եւ մասնաւորապէս թոքախտի դէմ մինչեւ հիմա գործածուած միջոցները քննել եւ ուսումնասիրել, մասնաւորապէս հաստատել միջազգային կեդրոնական գիւտական Ժիւրբախտի դէմ։

Ու տարակից չի կայ թէ այդ գումարուած մին միջազգային հանդամանքը ապահովուած է քանի որ Գերմանիոյ կայսրն ու կայսրուհին, Անգլիոյ, Շուէտի, Պելճիքայի, Տաւրիսի, Իտալիոյ, Սլոնիոյ, Սերբիոյ, Ռումինի, Եւրոպայի թագաւորները եւ Ֆրանսիոյ ու Զուիցերլանդի նախագահները ջանքեր լծելուով բարեմաղթութիւններ զրկած էին նոյն Համաժողովին։ Այս երկիրներէն զատ՝ մասնաւոր ներկայացուցիչներ զրկած էին նաեւ Ամերիկա, Իտալիա, Սլոնիա եւ Ռումին, Աւստրիա, Եւրոպա։

Աւելորդ պիտի ըլլայ հոս երկար բարակ խօսիլ Համաժողովին մանրամասն գործառնութիւններուն վրայ։ Իմ խօսակցութիւնս ժողովուրդին հետ է, ուստի լոկ կը փափաքիմ հոս մէջ բերել խորհրդակցութիւններուն այն մասը, որմէ ուղղապէս եւ գործնականապէս կրնայ օգտուիլ հասարակ ժողովուրդը։

Այս միջազգային գիտական — բժշկական Համաժողովը կրկին անգամ ու շատ բացարձակ կերպով հաստատեց թէ անհրաժեշտ է որ ժողովուրդը բմունէ թոքախտին վարակիչ, մէկէն միւսին անցնող հիւանդութիւն մը ըլլալը։ Ու այս վարակումը կը կատարուի գլխաւորապէս խոտիին միջոցով։ Եւ այս է որ լաւ հասկցուելու է ժողովուրդին բոլոր զատակարարներուն կողմէ հաստատապէս։

Անկասկած ըլլանք այլեւս թէ թոքախտէ չի վարակուելու, թոքախտէ զերծ մնալու մէկ կերպ կայ միայն։ Այս ու ասկէ առաջ

գումարուած նմանօրինակ համաժողովներ միշտ նոյն բանը կրկնեցին թէ՛ թոքախտի ահաւոր ծաւալումին առաջը առնելու միակ ու զլխաւոր կերպն է զգուշանալ թոքախտի մանրէներէն, որ ուրիշ խօսքով ըսել է զգուշանալ թոքախտաւորին խոտիէն զլխաւորապէս։

Այլեւս յայտնի է բացարձակապէս թէ թոքախտաւորին թոքած խոտիէն է որ կը տարածուի թոքախտը։ Այդ խոտիը կը պարունակէ բազմաթիւ մանրէներ, որոնք թոքախտաւորին բերնէն ելլելով պիտի մանեն մեր թոքերուն մէջ։ Ներեցէ՛ք քիչ մը տգեղ բացատրութեան, բայց այս է իրողութիւնը իրէն շնորհալի ձեւին տակ։ Խզճափա հեղինակ մը կ'ապահովէ մեզ թէ սովորական թոքախտաւորին մը քսանըջորս ժամուան թոքած խոտիին մէջ կը գտնուին ա՛յնքան բազմաթիւ մանրէներ որ անոնցմէ կարելի է չորսական հատ նուէր զրկել աշխարհիս չորս կողմերը գտնուող բնակիչներէն իւրաքանչիւրին, նոյն ատեն իրեն վար գնելով 4-5,000,000 մանրէ։

Այս սարսափաւոր անգամ մը միտք պահուել վերջ՝ ա՛լ զիւրին է հասկնալ ի՛նչ ինչո՛ւ այսքան ծաւալած է այդ ահաւոր հիւանդութիւնը։ Ու նոյն ատեն զիւրին ալ պիտի հասկցուի թէ ինչո՛ւ կը յաճախարարուի չի քֆմեչ ո՛ր եւ է տեղ եւ զգուշանալ թոքախտաւորին խոտիէն։

Համաժողովին մէջ զանազան երկիրներու պատուիրակները ներկայացուցած են տեղեկագիրներ, որոնց մէջ իւրաքանչիւրը կը խօսի իր պատկանած երկրին մէջ գործադրութեան դրուած նախադրուշական արգելիչ միջոցներուն վրայ։ Եւ ամէնքն ալ միաճաղայն կը վկայեն թէ զգալի տարբերութիւն մը նշմարուած է թոքախտաւորներուն թիւին վրայ՝ վարժեցնելով ու համոզելով ժողովուրդը չի թքնել հասարակաց վայրերու, խնայէս որճարաններու, կայարաններու, հանրային սպորտանոցներու, թրամուէյներու մէջ։

Եւրոպական ու ամերիկեան կարգ մը քաղաքներու եւ նահանգներու մէջ սղաճում կան տուգանքի կը գատապարտուին անոնք որ հո՛ս հո՛ն, հանդիպած անդերին կը թըքանեն, հոգ չէ թէ թոքախտաւոր չըլլան ա

տանք : Օրէնքը հարկաւ ընդհանուր կ'ըլլայ եւ կառավարութիւնը կը պատժէ թքնողը , թէեւ իր առաջին նպատակն է թոքախտաւորին խուխին դէմ կռուիլ : Այս օրէնքին անստատոյններէն՝ մինչեւ հինգ ոսկի տուգանք կ'առնուի : Ու առանց յատուկ անուններ տալու բաւական է ըսել թէ կարգ մը երկիրներ լիովին կը գործադրեն այդ կանոնը , եւ ամէն կողմէ գոհունակութիւն կը յայտնուի ձեռք բերուած քաջակերտական արդիւնքին համար :

Խուխին դէմ դրուած այս արգելքին հետ՝ Համաժողովը խիստ կարեւոր կը նկատէ ժողովուրդը հրահանգել այս մասին . հասկցնել ընդհանուր ժողովուրդին թէ ինքնապաշտպանութեան ու հանրային առողջութեան համար անհրաժեշտ եղող կարգ մը ամենատարրական բաներ կան , որոնց ուղադրութիւն ընծայելու եւ կարեւորութիւն տրուելու է : Ուրիշ խօսքով , ժողովուրդը գործածելու է իր խելքը . կոյր անտարբերութենէ ու յամառ ազդեցութենէ հրաժարելու է , եւ ականջ կախելու է քիչ մըն ալ բժիշկներուն խրատներուն՝ ի մասին նախազգուշական միջոցներու : Անխելք , անխորհուրդ բան է ըրածնիս . կը ստականք , կը սարսափինք ամէնքս ալ նոյն խիստ «թոքախտ» անունէն եւ սակայն երբ մէկը ելլէ անկէ զերծ մնալու համար խրատներ տայ ու կերպեր թելադրէ՝ չենք ուզեր հաւատալ ու մտիկ ընել ըսածներուն : Եւ այս երկրորդ կէտն է որ կը շեշտէ նաեւ Պերլինի վերջին Համաժողովը . կը թելադրէ որ ընդհանուր ժողովուրդը ճանչնայ իր թշնամին , իր մահացու թշնամին , ու անոր դէմ դնելու կերպերն ուսումնասիրէ բանականօրէն :

Ու եթէ ամէն մարդ այս մասին իր ձեռքէն եկածը ընէ՝ տարակոյս չի կայ թէ մեծ քաջ մը առնուած պիտի ըլլայ թոքախտի ծաւալումին դէմ . ու մենք ալ մեր կարգին անհատաբար եւ հաւաքաբար օգուտ մը քաղած պիտի ըլլանք Պերլինի միջազգային Բժշկական Համաժողովէն :

ՏՈՔԹ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՎՍԵՄ. ՏՈՔԹ. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ ԷՖԷՆՏԻ

Մասիսի նախորդ թիւը մամուլի յանձնուած էր արդէն , երբ ծանուցուեցաւ թէ Վիչ. Սուլթանը բարեհաճած է Պալայի աստիճան շնորհել Վսեմ. Տոքթ. Խորասանճեան էֆէնտիին , որ միւլենոյն ժամանակ պատուուած է Կայս. Բժշկական Վարժարանին «Պատուակալ Բրոֆէսէօս»ի տիտղոսով . Բերկրութեամբ արձանագրելով Կայս. բարձր գնահատման այս հաւաստիքը որուն կ'արժանանայ Տոքթ. Խորասանճեան էֆէնտին , կը շնորհաւորենք ն. Վսեմութիւնը որ երեսուն տարիէ ի վեր կը դասախօսէ Կայս. Բժշկական Վարժարանին մէջ եւ որուն շնորհիւ՝ խառնաճանաչութեան մասին գիտական հաստատուն ծանօթութեանց տիրացած են այնքան բժշկական ուսանողներ , այսօր ճարտար եւ ծանօթ բժիշկներ դարձած : Յարգելի բժշակաւոր ոչ միայն ամենէն պատկառելի դէմքն է հայ բժշկական գասուն , այլ եւ իր օտար պաշտօնակիցներուն քով կը վայելէ նոյն մեծաբանքը ու գնահատումը :

Մոնիդեօն Օռլիանդալ շեշտելէ ետքը սա պատուարեր պարտղան , թէ առաջին անգամն է որ այս բարձր շնորհին կ'արժանանայ Զինուորական Բժշկական Վարժարանին ուսուցչական մարմնին անդամներէն մէկը , կ'աւելցնէ որ , թէեւ Վսեմ. Տոքթ. Խորասանճեան էֆ. իր խնդրանքով հանգստեան կոչուած է , սակայն այդ գիտական հաստատութեան Տնօրէնութիւնը պիտի կրնայ տակաւին զիմեկ մեծանուն Բրոֆէսէօսին հմտութեան :

Մայրաքաղաքիս հայ եւ օտար թերթերը արժանաւոր դրուատականներ հրատարակեցին այս առթիւ Վսեմ. Տոքթ. Խորասանճեան էֆէնտիի նկատմամբ , որ ընդունեց Ս. Պատրիարք Հօր , բարձրաստիճան եկեղեցականներու , բժշկական դասին եւ ամէն ազգի բազմաթիւ ծանօթ անձնաւորութեանց շնորհաւորութիւնները :

“ԱՆԳԻՐ ԴՊՐՈՒԹԻՒՆ”

—> ԶԵՆՈՐԱԿՆԵՐ <—

Վանան Վրդ. Տեր-Մինասեան ձեռնարկած է շապաղութեան յանձնելու իր Անգիր Դպրութիւն երկասիրութեան Բ. հասորը: Բանասերներուն ու գրասերներուն համար մասնաւորապէս շանեկան պիտի ըլլայ այս հրատարակութիւնը՝ ինչպէս եղաւ անոր առաջին մասը որ մեծ ընդունելութիւն գտաւ: Հեղինակը, սակայն, — հա՞րկ է ըսել — ամբողջական հասոր մը ի լոյս բնծայելու նիւթական կարողութենէն զուրկ՝ մտադրած է Տեր առ Տեր հրատարակել որուն ծախքը հայքայքելու համար բաժանորդագրութիւն մը կը բանայ՝ սրտառուչ ու ինքնասիպ նամակով մը որուն մէկ օրինակն ալ Մասիսի խմբագրութեան խրկած է: Կը յուսանք եւ կը վաւաքենք որ իր այս անկեղծ կոչը նպաստաւոր ընդունելութիւն մը գտնէ, մանաւանդ որ Վանան վարդապետ չի յաւակնիր միակ մեկեանա մը գտնել, այլ ամբողջ ընթերցող հրատարակութիւնը կ'ուզէ ունենալ իբրեւ մեկեանա:

Աւանդիկ իր նամակը .

Տէր Իմ, Տէ՛ր ,

Աշխարհ գիտէ, թէ մինչեւ ցարդ ինչ զատ գուցէ մէկն եղած չէ, որ 35 տարիէ ի վեր եկեղեցական եւ գրական ծառայութիւններ մատուցած ըլլայ, եւ այցելած գրեթէ բոլանդակ Օսմանեան երկիրն ու Ռուսահայ գաւառները, Յունաստանն ու այլուր:

1867—1870 Կիլիկիա եւ Եգիպտոս — 1870—1875 Երուսաղէմ եւ Մուշ, Թատերգակ — 1875—1877 Պատր. քարտուղար, ատենադպիր ժողովական եւ հրապարակագիր: — 1877—1879 Երկիցս ի Պոնտոս, Կարին, Պայագիրա, ծայրէ ծայր: Յետոյ Կարս, Ախլցիկ, Բորժոմ, Թիֆլիս, Էջմիածին, Ալաշկերտ, Պաթում: — 1879—1881 տաղանդաւոր Եւդոկիոյ, Պատր. քննիչ Սմատիւր-Մարգարտի: — 1881—1886 Կրկին Պատր. քարտուղար, ատենադպիր ժողովական, «Յիսակ Առակք» երկհատոր գրքի եւ «Արեւածագ» ի հրատարակիչ: — 1886—1888 Աթէնք, Կա-

րընթոս, Քիտո, Հաուրոս եւ Քանտիւա. հրատարակագիր «Խօսնակ-Սոխակ»ի: — 1888—1890 Սվազ եւ Արմաշ, վերածառու: — 1890—1896 Երկիցս Պատր. քարտուղար, գասարիսկրօնի յետի-Գուշ, Օրացուցագիր, շարագիր «Անգիր Դպրութիւն եւ Առակք», «Աշխարհարար Աւետարան եւ Մեկնութիւն» գրքերու եւ «Լոյս»ի: — 1896—1901 Քարակէօմիսիկ եւ Պէշիկթաշ, Միանգամայն թափառայած, միշտ արգահատիկ իմիններէս:

Տէ՛ր Իմ, Տէ՛ր, հիմա գուք ի՞նչ կ'ուզէք, որ զիս քաջալերած ըլլաք եւ գուք օժտուած բարոյագէտ:

Տօնատէր ըլլալու համար «Խօսնակ»ը թէ «Սոխակ»ը կ'ուզէք. Գին 10 դրուշ:

Հուարճանալու համար «Արեւածագ»ը կ'ուզէք. Գին 10 դրուշ:

Հոգեւոր ըլլալու համար «Աշխարհարար Աւետարան եւ Մեկնութիւն»ը կ'ուզէք. Գին 15 դրուշ:

Պապերնուդ ու մամերնուդ առ սէր յիշատակի՝ «Անգիր Դպրութիւն եւ Առակք» կ'ուզէք. Գին 25 դրուշ:

Կ'երգնում թէ ԳԻՐԷՆ վազ գալ ուզեցի, մեռելակիր գողաղներու գորդ ըլլալ ուզեցի, այլ չեղաւ. . . այժմ ստիպուեցայ նորէն ԳԻՐԷՆ Մուրաւմի. — ոչ, վասնզի Լուսաւորչի ըյտ հաւատքի ըյտ ճրագն իր զաւակներուն որտի՛ն մէջ գեւ մարած չէ, որ մուրիկ ըլլամ. Եւ ո՞վ չգիտեր սա հնադարեան ճշմարտութիւնը, թէ ո եւ է օգտակար գիրք մը շարագասէն ու տպագրէն ալ՝ նուիրական ու բարենպաստակ հանրային ձեռնարկի մը համարժէք է, մանաւանդ այդ գիրքն ըլլայ ժողովրդեան մը հոգեւէն գիրքը, յիշատակագիր նախնի հետաքննին պատուական տւանդներու:

Ո՞վ եմ ես. — հին հայ վարդապետներու յետին մնացորդներէն մին. ի՞նչ կ'ուզեմ. — զէթ քաջալերութիւն մը ի յաջողութիւն հետազննէ, տեսար առ տեսար, կիսամեծայ հրատարակելի «Անգիր Դպրութիւն» գրքին հատորի տպագրութեանը (*), կամ շնորհք մը ժամուց մը, զոնէ խաթերն համար Զիր սրտի

(*) Վեցամեայ բաժնեգին 25, տարեկան 50 դրուշ:

միջակայքում ու տիրական հոգեւորացիներուն, որոնց ի հանգիստ «Հոգւոց» մը թող լսուի սրտիս խորէն առ Աստուած :

Վերջին խօսքս . եթէ մէն միայնակ մէկն ըլլայ, որ զիս յիշէ իբրեւ տրուպ գրիչ մը ի հայ դպրութեան եւ իբրեւ յետին մը ի հայ պաշտօնէութեան, եւ օրհնէք մը արտասանէ յանուն յիշատակիս, ահա այդ իսկ է վարձքս, փառքս եւ անմահութիւնս :

Ծառայ ծառայիցդ Աստուծոյ
ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՏԵՐ-ՄԻՆԱՍԵԱՆ

Վ. Պոլիս, 1902 Հոկտեմբեր 27

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ս. Հայրապետը Թարգմանչաց տօնին օրը Օշական երթալով այցելեր է Ս. Մեսրոպ Թարգմանչի գերեզմանը եւ իրիկունը էջմիածին վերադառնալով ներկայ գտնուել է ձեռնարանի մէջ տրուած գրական երեկոյթին որտեղ միջոցին Ն. Ս. Օծուիւնը կարդացեր է իր գրած կրօնական մէկ բանաստեղծութիւնը :
Կիլիկիոյ Կաթողիկ. Ընթերցիւնը . — Նախարարաց Խորհուրդը նկատի առնելով Ս. Պատրիարք Հօր Թագրիրը՝ Կիլիկիոյ Կաթողիկոսական ընտրութեան վրայ, ինչպէս նաեւ լայնակից տեղեկաւորը, օրինաւոր գտած է :
Ս. Սահակ Կաթողիկոսին ընտրութեան օրինաւորութիւնը հաստատող Նախարարական Մարզապետ Մեծ-Եպարքոսութեան կողմէ մատուցուած է ի Կայս. Պալատ, Կայս. բարեհաճ Իրաւէին շնորհուիլը խնդրուելով :

— Ս. Պատրիարքը յատուկ պաշտօնագրով հաղորդած է էջմիածին, Ս. Հայրապետին, Կիլիկիոյ Կաթողիկոսական ընտրութեան արդիւնքը, աւելցնելով միանգամայն թէ ձեռնադրուած իշխանութեան թագրիր մատուցուած է որպէսզի Կայս. Պէրաթը շնորհուի օր առաջ եւ Կաթողիկոսական օծումը տեղի ունենայ Սիսի մէջ :

— Կիլիկիոյ նորընտիր Ս. Կաթողիկոսը Հոկտ. 19 թուականով Երուսաղեմէն հեռու գլխի ուղղած է Ատանա՝ Կուսակալ Պահրի փաշայի, Բէքմէզեան Տ. Կիրակոս, Կէօմ-

րիւքճեան Տ. Մովսէս եպիսկոպոսներուն, ինչպէս նաեւ Քաղ. Ժողովին, Թաղ. Խորհուրդին, դպրոցներու հոգաբարձութեան եւ այլն, շնորհակալութիւն յայտնելով իրեն ուղղուած շնորհաւորութեանց ի պատասխան :

— Ատանայի Հայ-Հռոմէականաց Առաջնորդ Թերզեան Գերապածառ, որ անցեալ տարի Ատանայի մէջ մօտէն ծանօթացած էր Տ. Սահակ Սրբազանի, շնորհաւորական նամակ մը ուղղած է Ն. Ամենապատուութեան, Կիլիկիոյ Կաթողիկոս ընտրուելուն առթիւ :

— Կաթողիկոսական տեղապահ Տ. Կիրակոս եպիսկոպոս Ատանայէն ճամբայ ելեր է դէպ ի Սիս : Նոյնպէս պատգամաւորները հեազհեաէ իրենց տեղերը կը վերադառնան : Ատանայէն կը գրեն Պատրիարքարան թէ գաւառային ժողովները միացած՝ ամէն ջանք ի դարձ կը դնեն Առաջնորդարանը նորոգելու եւ զանազան պատրաստութիւններ տեսնելու, արժանաւորապէս ընդունելու համար նորընտիր Ս. Կաթողիկոսը :

— Պատրիարքարանի կողմէ հրաւիրակ կարգուած է Տ. Մովսէս եպիսկ. Կէօմրիկէճեան՝ որ Ատանայէն Երուսաղեմ պիտի երթայ՝ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը իր աթոռը առաջնորդելու համար : Ատանայի Հայերէն երկու ծանօթ անձեր փափաք յայտնած են Տ. Մովսէս եպիսկոպոսին ուղեկցիլ իրենց ծախքով :

Նպաստից Յանձնաժողովը որոշեց Մուշի մէջ բացուելիք Արհեստանոցին յատկացնել Պազուի Հայերուն կողմէ Արհեստանոց-Որրաւորոցի մը հաստատման նուիրուած գումարը : Որոշեց նաեւ ապագրութեան յանձնել Ռէթէոս էֆ. Պէրպէրեանի աշխատասիրած «Առաջին գիրք Փրանսերէնէ ի հայ թարգմանութեան»ը զոր հեղինակը նուիրած էր Պատրիարքարանի Նպաստից Սնտուկին : Նոյնպէս, նոր զարկ մը տալ «Մայրենի Լեզու»ներուն սպաւմանը, գրավաճառներուն կարծիքն ալ առնելով :

Պողոս փառա Նուպարի որդին Առաքէլ պէյ չորեքշաբթի օրը մայրաքաղաքս հասաւ Բարիկէն եւ ուղղակի իր մեծ հօր Տատեան Յովհաննէս պէյի բնակարանը դնաց, Այսթէֆանոս : Առաքէլ պէյ հօր կողմէ Նուպար

փաշայի թոռն է եւ մօր կողմէ՝ Յովհաննէս պէյի : Դատարարական Համալսարանի մը մէջ , Մօս օրէն Ազեքսանդրիա կը վերադառնայ :

Պէրպէրեան Վարժարանի նախկին երեք սաներ , որոնք Պրայլա հաստատուած են եւ ժամանակին չէին իմացած այդ կրթական հաստատութեան 25 ամեայ յօրեւեանին կատարումը , սիրալիր նամակով մը 700 ֆր. զրկած են իրենց դատարարակին՝ Ռէթէոս էֆ. Պէրպէրեանի :

Բարեյիշեսակ Կիւմէեան Յովհաննէս էֆի հոգւոյն համար պատարագ եւ պաշտօն մատուցուեցաւ կիրակի օրը Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին , կարգադրութեամբ Ս. Պատրիարք Հօր որ անձամբ նախագահեց հոգեհանգստեան արարողութեան եւ գեղեցիկ քարոզ մը խօսեցաւ՝ օրհնելով յիշատակը հանգուցեալ բարեգործ ծերունիին որ , ինչպէս յայտնի է , 10.000 ոսկի կտակած է կրօնային , մարդասիրական ու կրթական նպատակներով եկեղեցին լեցուած էր խուռն բազմութեամբ :

Խազգիւղի Գալֆաեան Որբանոցին ի նըպաստ Մաքրիգիւղի վարժարանին աշակերտները 132 զըշի դումար մը հանգանակելով մէջերնին՝ Պատրիարքարան զրկեր են , Փափագելի էր որ ուրիշ թաղային դպրոցներու սաներն ալ հետեւէին այս աղնիւ օրինակին : Երանուհի մայրապետը բաւական ապաքինած ըլլալով , անկողնէն ելած է : Շարժուա մէջ ձեռնարկուեցաւ Որբանոցի մատրան շինութեանը որուն համար , ինչպէս կը յիշուի , ասկէ առաջ Նիւ-Եօքէն 50 ոսկի նպաստ զրկած էր Թաւանձեան էֆ. Ս. Պատրիարքին :

Հարսանեկան հանդես — Երկուշաբթի օրը Գառգիւղի Ս. Թադաւոր եկեղեցիին մէջ վայելուէ հանդէսով տեղի ունեցաւ՝ Պատրիարքարանի քարտուղարներէն Նշան էֆ. Փափագեանի աղջկան Օր. Էլիզի պսակադրութիւնը՝ Տիրան էֆ. Հանրմանի հետ Ներկայ էին Պատրիարքարանի պաշտօնէութիւնը , ազդականներ ու բարեկամներ , Եկեղեցական արարողութենէն հաքը , հարանեւորները առաջնորդուեցան Ֆէնէր-Պաղչէ , Պէլ-Վիւ օթելը ուր շքասեղան մը պատրաստուած էր Նշան էֆ. Փափագեան Ակնայ հին եւ

ծանօթ ընտանիքի մը կը պատկանի ու երկար տարիներէ հետէ կը պաշտօնավարէ Պատրիարքարանի մէջ եռանդուն աշխատութեամբ , զոր գնահատելով՝ Ս. Պատրիարք Հայրը շնորհաւորութեան ու օրհնութեան դիրով մը հարսանեկան նուէր մը զրկած է հարսին : Նոյնպէս , շնորհաւորական գրեր ու նուէրներ զրկած են Պատրիարքարանի պաշտօնէութիւնը , եւ Սանասարեան վարժարանի Խնամակալութիւնը ու Յովսէփ-Իզմիրեանց դրական Յանձնախումբը որոնց քարտուղարութիւնը կը վարէ Փափագեան էֆ. :

Խոսուով էՖ. Բեքիւեան , որ իր դեղագործական վկայականը ստացած էր , մեկնեցաւ Մալաթիա ուր քանի մը ամիս իր ծնողաց քով մնալէ հաքը՝ պիտի երթայ հաստատուիլ Խարբերդ : Մեր համակրելի բարեկամը ու աշխատակիցը խոստացած է Ճամբու Նօթեր զրկել մեզի՝ իր այցելելիք քաղաքներէն :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

ՕՐ. Մ. Յ. (Բերա) — Շատ հաճելի անակնկալ մը պատճառեցիք Մասիս խմբագրութեան՝ Ձեր սիրուն ու սրամիտ մէկ յօդուածը զրկելով զոր ներկայ Թիւով հրատարակելու առթիւ հրապարակաւ փախագ կը յայտնեք Ձեր գնահատելի աշխատակցութիւնը վայելելու այսուհետեւ :

Գ. Գ. Դ. (Յօգւատ) Ստացանք Ձեր նամակը եւ այսօրուընէ կը սկսինք Մասիս զրկել Ձեզ , ինչպէս որ փափայ յայտնած էիք : Քաղաքիդ մէջ գործակալ չունիք , տարեկան բաժանորդագրինը , 50 զըշ. , հաճեցէք զրկել մանտա-բոթով եւ կամ նամակի բուլով :

ՏՐԱՊԻԶՈՆԻ մէջ գործակալ չունենալով , կը խնդրենք այդ քաղաքի մեր այն բաժանորդներէն որոնք տակալին չեն վճարած իրենց բաժանորդագրինը , որ հաճին ուղղակի խմբագրութեան զրկել՝ մանտա-բոթով կամ նամակի բուլով : Նոյնը կը խնդրենք նաեւ ՊՐՈԽՍՍՅԻ եւ ԿԻՐԱՍՈՆԻ մեր այն քանի մը բաժանորդներէն որոնք տակալին չեն հատուցած՝ բաժանորդագրութեան հաշուէ իրենց իրաւիկ պարտքը : Զարմեր որ իւրաքանչիւրին առանձին նամակ գրենք , ու կը շատանանք՝ առ այժմ՝ մոռացութեան վերադրել այս յայտարարումը :

Արսօնասէր Կ. Ս. Իիթիլիճեմն

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԵՍԵԱՆԻ

Կ. Պոլիս , Ֆինեանձըլար եօզուշու . Թիւ 27

ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Գնդ. Տոֆ. Աղեֆանդր Պէյ Արապեան այս անգամ իր բնակութիւնը հաստատած է Բերա, Թարլա-Պաշի քիւ 121, ուր կը գրեմուի առաւօս եւ երեկոյ: Իսկ կէս օրուան լիթոցները, ուրբաթ եւ կիրակիի զատ, կը գտնուի Պահնէ-Գաբու, Մինասեան դեղատոմար: 2—10

ՏՈՔԹ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

Կեդրոնացեղի Մասքոսեան Տպարան ֆինանսները, Կ. Պոլիս

Գիտական շարժում Ա. Տարի (1885) (Սպառած): — Գիտական շարժում Բ. Տարի (1886) 20 զրշ: — Գիտական շարժում Գ. Տարի (1887) 20 զրշ: — Բնական Պատմութիւն Ա. հատոր (Կենդ. Հիւսուածարանութիւն եւ Մարդկային կազմախօսութիւն ու Բնախօսութիւն, Դասագիրք երկրորդական վարժարանաց): 40 զրշ: — Նախորդին համառոտ. Դասագիրք Նախակրթարանաց: 8 զրշ: — Ուսումնասիրութիւն միզային քաղցրութեան պատճառարանութեան եւ կազմութեան վրայ (Ֆրանսերէն) 10 զրշ: — Մասնա հայ տառից (Պատկեալ Իզմիրեանց

մրցանակաւ) 10 զրշ: — Մանրէարանութիւն 10 զրշ: — Տիեզերք եւ իր կազմութիւնը (Ֆրանսերէն) 10 զրշ: — Գրիգոր Աղաթոն (Մագում եւ կենսագրութիւն) 2 1/2 զրշ: — Առողջապահութիւն: 25 զրշ: — Մանդական գործարանք (Կազմախօսութիւն, Բնախօսութիւն եւ Առողջապահութիւն) 6 զրշ: — Մարդկային Սաղմնախօսութիւն: 5 զրշ: — Բառացուցով Ախտանունաց (Բ. Տիպ) 3 զրշ: — Տարուինակութիւն (Գ. Տիպ) 3 զրշ: — Տիեզերք եւ իր կազմութիւնը (Հայ. Թարգմանութիւն) 10 զրշ: 2—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ. ՄԵՍ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 200

Կալաթա-Աերայի Լիսէին դէմ

Գե. Եւ. Շր. օրերը առաւօսեան կանուխէն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

Բե. Դե. Ուր. օրերը 6 եւ մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ԻԻՆԻՕՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ԺԻԻՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ փասք	240,000,000 ֆր.
1899ին զանձուած ապահովագին	19,500,000 »
Գրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ գրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՑ ԺԻԻՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ փասք	99,000,000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Գրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — Ինչ որ «Ինքիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՊՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով: Նպատաւոր ապահովմանը անհամեմատ կերպով աւելի զերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան պայմանները: Ետհարաժիկներու տարուէ տարի անմիջական վճարում. արդ ինքիօնի ապահովագրութեան ԶԵՐԻՆ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաշխման (accumulation des bénéfices) օճիկ եւ վճարումները դուրսեանք գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան գրամատուին է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալաթա, Փանսապուրուն խան, Օսմ. Պանֆային դիմացը

Գործակալութիւնք Թարքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ՏՊԱԳՐԱՆԸ

Յարատել գարգացմամբ հասած է Տպարաններու
առաջին կարգին.

ԿԱԶՄԱՏՈՒՆԸ

Անմրցելի ըլլալու կէս դարու համբաւը կը վայելէ.

ԹՂԹԱՎԱՑԱԹԱՆՈՅԸ

Ճոխ մթերք մը ունի լաւագոյն տեսակէ

Հետեւաբար աւելորդ է ըսել թէ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ, ԿԱԶՄԻԼ
ԹՂԹԵՂԻՆԱՅ ՎԵՐԱԵՐԵՆԱԼ ամէն կարգի յանձնարարու թեանց
Համար գլխուելիք լաւագոյն Հաստատու թիւնն է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ՊԱՅՊԸԼ-ՀԱՌԻՁ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

1903 ՏԱՐԻՈՅ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Յ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ը

(AGENDA INTERNATIONAL)

(H. MATTEOSIAN)

Թուրքերէն, Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն լեզուներով

Նախորդ տարիներէն աւելի ճոխ և աւելի խնամով պատրաստուած |

Պարզ լաթակազմ 3 զր.

Ընտիր լաթակազմ 5 ,

ՈՍԿԵԶՕՄ ՓԱՌԱԿԱԶՄԸ 8 ,

25 օրինակէն աւելի

գնողներուն գոհացուցիչ

գեղջ :

Կը խնդրուի գաւառի պաշտօնարժան յանախորդներէն որ հանին իրենց
յանձնարարութիւնները կանուխէն ընել՝ Յուշատեսչերը ժամանակին ձեռներին
ունենալու համար . Իժմել Հրատարակչին ,

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ, ՊԱՅՊԸԼ ՀԱՌԻՁ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ